ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE4E-F39A-44F3-B9D0 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/4068/02/26 ք. Երևան
22 Մայիս 2026թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամալյանը քննության առնելով ըստ հայցի՝ «ՍՔԱՅԱԳՐՈ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Օդային եղանակով նյութերի ցրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով գնահատող հանձնաժողովի 2026.01.15-ի « N 1» որոշմամբ հայտարարված թիվ «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 06.04.2026թ. կազմված թիվ 10 արձանագրությամբ՝ «Արմենիան Հելիքոփթերս» ՍՊԸ-ին ընտրված (մրցույթի հաղթող) մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով պատասխանող ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցչի կողմից ներկայացված գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑ

I. Գործի դատավարական նախապատմությունը.

1.1. Հայցվորի ներկայացուցիչը 14.04.2026 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով (այսուհետ նաև՝ Համակարգ) հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ պատասխանող ՀՀ շրջակա միջավայրի նախարարության՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Օդային եղանակով նյութերի ցրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով գնահատող հանձնաժողովի 2026.01.15-ի « N 1» որոշմամբ հայտարարված թիվ «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 06.04.2026թ. կազմված թիվ 10 արձանագրությամբ՝ «Արմենիան Հելիքոփթերս» ՍՊԸ-ին ընտրված (մրցույթի հաղթող) մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

1.2. Ներկայացված հայցադիմումը 14.04.2026 թվականին մակագրվել է դատավոր Ա. Դունամայյանին և Համակարգի միջոցով հասանելի է դարձել 15.04.2026 թվականին:

1.3. Դատարանը 2026 թվականի ապրիլի 18-ին կայացրել է հայցադիմումը վարույթ ընդունելու, ապացույցներ պահանջելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին որոշում:

1.4. Պատասխանողի ներկայացուցիչը 23.04.2026 թվականին համակարգի միջոցով ներկայացրել է հայցադիմումի պատասխան, որը նույն օրը համակարգի միջոցով դարձել է հասանելի:

1.5. Պատասխանողի ներկայացուցիչը 19.05.2026 թվականին համակարգի միջոցով ներկայացրել է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդություն (այսուհետ նաև՝ Միջնորդություն), որը նույն օրը համակարգի միջոցով դարձել է հասանելի:

1.6. Հայցվորի ներկայացուցիչը 20.05.2026 թվականին համակարգի միջոցով ներկայացրել է եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը փոփոխելու մասին միջնորդություն (այսուհետ նաև՝ միջնորդություն), որը նույն օրը համակարգի միջոցով դարձել է հասանելի:

II. Դատարանի հիմնավորումները.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բացառությամբ «Գնումների մասին» օրենքով նախատեսված դեպքերի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների

ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը նույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը գնումների հետ կապված վեճերի համար նախատեսել է երկու փոխկապակցված դատավարական կառուցակարգ: Առաջինը պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների, անգործության կամ որոշումների բողոքարկման դեպքում գնման գործընթացի ինքնաբերաբար կասեցումն է: Երկրորդը այդ կասեցումը վերացնելու բացառիկ հնարավորությունն է այն դեպքերում, երբ հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը:

Հետևաբար գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդության քննության առարկան ոչ թե վիճարկվող որոշման իրավաչափության վերջնական գնահատումն է, այլ այն հարցը, թե արդյո՞ք առկա են հանրային նշանակության և ժամանակային այնպիսի գործոններ, որոնց պայմաններում գնման գործընթացի հետագա կասեցումը կարող է անհամաչափ վնաս պատճառել հանրային շահին:

Դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված լիազորությունը պետք է կիրառվի գործի վերջնական ելքը չկանխորոշող գնահատման շրջանակում: Այսինքն՝ կասեցումը վերացնելու մասին որոշումը չի կարող ընկալվել որպես հայցապահանջի հիմնավորվածության կամ վիճարկվող որոշման իրավաչափության հաստատում, ինչպես նաև չի կարող նախապես լուծել այն հարցերը, որոնք ենթակա են գնահատման և լուծման եզրափակիչ դատական ակտով:

Այդ պատճառով այս փուլում Դատարանի գնահատումը սահմանափակվում է միայն այն հարցով, թե արդյո՞ք Միջնորդությամբ ներկայացված փաստական տվյալները բավարար են հանրային շահի տեսանկյունից գնման գործընթացը շարունակելու անհրաժեշտությունը հիմնավորելու համար:

Տվյալ դեպքում Դատարանն առաջին հերթին արձանագրում է, որ Միջնորդությունը ներկայացվել է պատասխանող՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության անունից՝ նախարարի պարտականությունները կատարող Արամ Մեյմարյանի կողմից գործով ներկայացված լիազորագրի հիման վրա: Հետևաբար, Դատարանի գնահատմամբ՝ այն ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դատավարական կառուցակարգի շրջանակում:

Բացի այդ, Միջնորդության հիմքում դրվել է այն հանգամանքը, որ գնման առարկան ուղղված է անտառներում սնկերի և վնասատու միջատների դեմ ավիացիոն պայքարի միջոցառումների իրականացմանը: Միջնորդությամբ ներկայացված տվյալների

համաձայն՝ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով նախատեսվել է «Անտառների վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումներ» պետական ծրագիրը, որի շրջանակում ձեռք են բերվում ինչպես սնկերի դեմ պայքարի և միջատասպան հեղուկ նյութերը, այնպես էլ այդ նյութերի օդային եղանակով ցրման ծառայությունները:

Միջնորդությամբ նաև ներկայացվել է, որ նշված միջոցառումների իրականացման ժամանակահատվածը պայմանավորված է եղանակային պայմաններով և վնասատուների զարգացման ցիկլով, իսկ մրցույթի հրավերով ավիացիոն պայքարի միջոցառումների իրականացման ժամկետ է սահմանվել 2026 թվականի մայիսի 15-ից մինչև հունիսի 20-ը:

Դատարանի գնահատմամբ՝ անտառների պաշտպանության, վնասատուների և հիվանդությունների կանխարգելման նպատակով նախատեսված պետական ծրագրի իրականացումը, քննարկվող հարցի գնահատման շրջանակում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով կազմում է հանրային շահի գնահատման հիմք: Նշված հանրային շահը վերացական բնույթ չի կրում, քանի որ այն կապվում է կոնկրետ պետական ծրագրի, անտառների վնասակար օրգանիզմների դեմ պայքարի սահմանափակ ժամկետի, նյութերի պահպանման ժամկետի և պետական անտառներում կանխարգելիչ միջոցառումների իրականացման օրենսդրական պարտականության հետ: Այս եզրահանգումը Դատարանը պայմանավորում է ոչ միայն Միջնորդությամբ ներկայացված փաստական տվյալների, այլև ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 25-րդ հոդվածով և ՀՀ անտառային օրենսգրքի 22-րդ ու 24-րդ հոդվածներով ամրագրված կարգավորումների հետ:

Դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 12-րդ հոդվածի իմաստով պետությունը պարտավոր է խթանել շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը՝ կայուն զարգացման սկզբունքով: Միաժամանակ ՀՀ հողային օրենսգրքի 25-րդ հոդվածով անտառային հողերը բնութագրվում են որպես կենդանական և բուսական աշխարհի պահպանման, բնության պահպանության և անտառային տնտեսության կարիքների համար նախատեսված հողեր, իսկ ՀՀ անտառային օրենսգրքի 22-րդ ու 24-րդ հոդվածներով անտառների վնասակար օրգանիզմներից պաշտպանությունը և պետական անտառներում վնասատուների ու հիվանդությունների կանխարգելման միջոցառումների կազմակերպումը դիտարկվում են որպես օրենսդրորեն ամրագրված պարտականություն:

Դատարանը հարկ է համարում վկայակոչել նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 12.03.2026 թվականի ՍԴՈ-1819 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ Սահմանադրության 12-րդ հոդվածից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունը, այդ թվում՝ տնտեսական ոլորտում, Սահմանադրության ուժով որդեգրել է կայուն զարգացման քաղաքականություն, որը պահանջում է երկրի առաջընթացը բնապահպանական խնդիրների ներդաշնակեցման և հավասարակշռման միջոցով ապահովել, իսկ շրջակա միջավայրի պահպանության, բարելավման և վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման համար պատասխանատու սուբյեկտը պետությունն է, որը պետք է ոչ միայն խթանի, այլև ապահովի բնապահպանական խնդիրների լուծումները:

Վերոնշյալ դիրքորոշումը սույն գործով վերաբերելի է այնքանով, որքանով գնման

գործընթացի կասեցումը վերացնելու հարցը վերաբերում է ոչ թե կողմերից որևէ մեկի տնտեսական նախապատվությանը, այլ պետության կողմից անտառների պաշտպանության և վնասակար օրգանիզմների կանխարգելմանն ուղղված ծրագրի ժամանակին իրականացման հնարավորությանը:

Դատարանն արձանագրում է, որ Միջնորդությանը կից ներկայացված և գործի նյութերում առկա փաստաթղթերի, այդ թվում՝ 2026 թվականի փետրվարի 9-ին կնքված ապրանքի մատակարարման պայմանագրի, արտադրանքի որակի անձնագրի, ինչպես նաև համապատասխան գնման ընթացակարգերի փաստաթղթերի համաձայն՝ սնկերի դեմ պայքարի և միջատասպան հեղուկ նյութերի ձեռքբերման համար նախատեսվել են նյութերի պահեստավորման և մատակարարման ժամկետներ: Միաժամանակ, ավիացիոն պայքարի միջոցառումների իրականացման համար սահմանվել է սահմանափակ ժամանակահատված:

Նույն տվյալների համաձայն՝ սնկերի դեմ պայքարի նյութի պահպանման ժամկետի և դրա կիրառման տեխնոլոգիական առանձնահատկությունների հաշվառմամբ՝ նյութերի արդյունավետ օգտագործումը կապված է հենց 2026 թվականի մայիսի 15-ից հունիսի 20-ն ընկած ժամանակահատվածի հետ:

Դատարանի գնահատմամբ՝ Միջնորդության քննության փուլում նշված տվյալները ենթակա են գնահատման ոչ թե գործի ըստ էության լուծման համար պահանջվող ապացուցման բարձր շեմով, այլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառիկ դատավարական կառուցակարգի կիրառման համար անհրաժեշտ բավարար փաստական հիմքի առկայության տեսանկյունից:

Նշված չափանիշի կիրառմամբ Դատարանը եզրահանգում է, որ ներկայացված տվյալները բավարար են արձանագրելու, որ գնման գործընթացի հետագա կասեցումը կարող է հանգեցնել ոչ միայն տվյալ գնման ընթացակարգի ուշացման, այլև անտառների վնասակար օրգանիզմների դեմ նախատեսված միջոցառումները ժամանակին չիրականացնելու իրական և կոնկրետ ռիսկի:

Անդրադառնալով հայցվոր կողմի այն առարկությանը, որ Միջնորդությունը հիմնված է ենթադրական հավանականության վրա, և որ գնման գործընթացի կասեցումը վերացնելը կարող է վնաս պատճառել հայցվորին՝ Դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասը չի պահանջում հանրային շահին վնասի արդեն վրա հասած փաստի հաստատում: մասնավորապես, նշված նորմը կանխարգելիչ բնույթի դատավարական կառուցակարգ է, որի կիրառման համար դատարանը գնահատում է՝ արդյո՞ք գնման գործընթացի հետագա կասեցումը կարող է առաջացնել հանրային շահին վնասելու իրական և կոնկրետ ռիսկ:

Տվյալ դեպքում այդ ռիսկը հիմնավորվում է ոչ միայն պատասխանողի ընդհանուր պնդումներով, այլև միջոցառումների սահմանափակ ժամկետով, նյութերի պահպանման ժամկետով և անտառների վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումների ժամանակային բնույթով:

Ավելին, հայցվոր կողմի փաստարկները հիմնականում վերաբերում են վիճարկվող

որոշման իրավաչափությանը, ընտրված մասնակցի հայտի գնահատման իրավաչափությանը, ինչպես նաև հայցվորի իրավունքների ենթադրյալ խախտման հարցին: Նշված հարցերը ենթակա են գնահատման գործի ըստ էության քննության շրջանակում, և տվյալ միջանկյալ դատավարական հարցի լուծման փուլում չեն կարող ստանալ վերջնական գնահատական:

Միաժամանակ, Դատարանն արձանագրում է, որ գնման գործընթացի կասեցումը վերացնելը հայցվորին չի զրկում վիճարկվող որոշման իրավաչափության դատական ստուգման իրավունքից և չի կանխորոշում եզրափակիչ դատական ակտով սահմանվելիք իրավական հետևանքները: Այն միայն վերացնում է օրենքի ուժով առաջացած ժամանակավոր դատավարական խոչընդոտը՝ այն չափով, որքանով տվյալ փուլում հանրային շահի պաշտպանությունը պահանջում է գնման գործընթացի շարունակություն:

Դատարանը նաև անհրաժեշտ է համարում անդրադառնալ հայցվորի կողմից ներկայացված՝ եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը փոփոխելու մասին միջնորդությանը, որով հայցվորը խնդրել է եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը նշանակել մինչև 2026 թվականի մայիսի 29-ը: Նշված միջնորդության հիմքում, ըստ էության, դրվել է այն հանգամանքը, որ ավիացիոն պայքարի միջոցառումների իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը արդեն սկսվել է, և որ գնման առարկայի բովանդակությունը կազմող գործողությունների կատարումը ժամանակային առումով հրատապ է:

Դատարանի գնահատմամբ՝ հայցվորի վերոնշյալ միջնորդությունը չի կարող դիտարկվել որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դատավարական կառուցակարգին համարժեք միջոց: Նշված նորմով օրենսդիրը նախատեսել է հատուկ և անմիջական դատավարական մեխանիզմ այն դեպքերի համար, երբ հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Այդ կառուցակարգի կիրառման դեպքում դատարանը լուծում է հենց գնման գործընթացի կասեցման վերացման հարցը, իսկ եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը փոփոխելու միջնորդությունը չի վերացնում օրենքի ուժով առաջացած կասեցումը և չի ապահովում գնման գործընթացի շարունակման նույն դատավարական հետևանքը:

Դատարանը նաև արձանագրում է, որ եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը փոփոխելու միջոցով հայցվորի նշած ժամանակային ռիսկը կարող էր չեզոքացվել միայն այն դեպքում, եթե այդ միջոցը բավարար և համարժեք լիներ հանրային շահի պաշտպանության համար: Մինչդեռ տվյալ դեպքում, հաշվի առնելով Միջնորդությամբ ներկայացված տվյալները՝ ավիացիոն պայքարի միջոցառումների սահմանափակ ժամկետի, վնասատուների զարգացման ցիկլի, եղանակային պայմանների և գնման գործընթացի շարունակման համար անհրաժեշտ պայմանագրային ու կազմակերպչական գործողությունների վերաբերյալ, միայն եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը մոտեցնելը բավարար չէ հանրային շահի պաշտպանության ներկայացված ռիսկը չեզոքացնելու համար:

Միաժամանակ Դատարանն արձանագրում է, որ գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդության բավարարումը չի կանխորոշում հայցապահանջի հիմնավորվածության, վիճարկվող որոշման իրավաչափության կամ կողմերի

նյութաիրավական դիրքորոշումների գնահատումը: Հետևաբար, եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը փոփոխելու մասին հայցվորի միջնորդությունն անհիմն է և ենթակա է մերժման:

Նման պայմաններում Դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործով ներկայացված տվյալների հիման վրա առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այն բացառիկ իրավիճակը, երբ հանրային շահից ելնելով անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը:

Դատարանի համոզմամբ՝ նշված եզրահանգումը համաչափ է, քանի որ, մի կողմից, կասեցման պահպանումը կարող է հանգեցնել անտառների վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումները ժամանակին չիրականացնելու իրական ռիսկի, իսկ մյուս կողմից՝ կասեցումը վերացնելը չի լուծում հայցապահանջի հիմնավորվածության հարցը և չի վերացնում հայցվորի դատական պաշտպանության իրավունքը:

Ուստի Միջնորդությունը ենթակա է բավարարման, իսկ սույն քաղաքացիական գործով ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08 ծածկագրով գնման գործընթացի կասեցումը՝ վերացման:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջից ելնելով՝ որոշումը դրա կայացման օրն անհապաղ ենթակա է ուղարկման «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ տեղեկագրում հրապարակման համար:

III. Դատարանի եզրահանգումները.

Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ, 200-րդ և 234.11-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

1. «ՍՔԱՅԱԳՐՈ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված՝ եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը փոփոխելու մասին միջնորդությունը մերժել:
2. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից ներկայացված՝ գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդությունը բավարարել.
2.1. վերացնել ԵԴ2/4068/02/26 քաղաքացիական գործով ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Օդային եղանակով նյութերի ցրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08 ծածկագրով գնման գործընթացի կասեցումը:
3. Որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում հրապարակելու համար:
4. Որոշումը ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ **Ազատ Դունամալյան**

ԿԱՎԵՐԱՑՎԱԾ Է
ՀԱՍՏԱՏԹԸ Ա.
ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆԻ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am